

Յեղիճակային նյութերի պահանջները

«Գիտաբժշկական հանդեսը» հետևողականորեն ջանքեր է ներդնում, որպեսզի տպագրվող նյութերին ներկայացվող պահանջներն առավելագույնս մոտեցվեն միջազգային չափանիշներին, մասնավորապես՝

- Բժշկական ամսագրերի խմբագիրների միջազգային կոմիտեի (ICMJE) <http://www.icmje.org>
- Հրատարակչական էթիկայի կոմիտեի (COPE) <http://www.publicationethics.org.uk>
- CONSORT չափանիշներին <http://www.consort-statement.org>

«Գիտաբժշկական հանդեսը» հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով ընդունում է հետևյալ աշխատանքները՝ տպագիր և էլեկտրոնային (MS Word ֆորմատ՝ .doc կամ .docx) տարբերակներով:

1. Կլինիկական կամ փորձարարական հետազոտությունների վրա հիմնված բնագիր հոդվածներ.

- հոդվածի ծավալը մինչև 3000 բառ՝ ներառյալ գրականության աղբյուրները (մինչև 30 աղբյուր), աղյուսակների և նկարների մեկնաբանությունները:
- հոդվածի հոդվածի թեգիսը պետք է կազմված լինի 5 պարտադիր պարբերությունից (Նպատակը, Նյութը և մեթոդները, Արդյունքները, Եզրակացություններ, հանգուցային բառեր) և չպետք է գերազանցի 300 բառը:

2. Գրականության տեսություն.

- Պետք է ունենա մասնագիտական ուղղվածություն և ծավալը չպետք է գերազանցի 6000 բառը՝ ներառյալ գրականության աղբյուրները (մինչև 100 աղբյուր), աղյուսակների և նկարների մեկնաբանությունները:
- Գրականության տեսության թեգիսը պետք է լինի հակիրճ (մինչև 150 բառ), ներառյալ հանգուցային բառերը:

3. Կլինիկական դեպք.

- Ախտորոշման խնդրի և վերջինիս լուծման կամ կլինիկական դեպքի վերաբերյալ տեղեկատվական կարճ հաղորդագրություն:
- տեքստի ծավալը չպետք է գերազանցի 1000 բառը՝ ներառյալ գրականության աղբյուրները (մինչև 10 աղբյուր), աղյուսակների և նկարների մեկնաբանությունները:

4. Խմբագրական հոդված կամ նամակ խմբագրին.

- տեքստի ծավալը չպետք է գերազանցի 1500 բառը՝ ներառյալ գրականության աղբյուրները (մինչև 10 աղբյուր), աղյուսակների և նկարների մեկնաբանությունները:

5. Կարծիք (տեսակետ) խնդրի վերաբերյալ.

- բժշկական և հարակից գիտությունների թեմատիկ խնդիրների շուրջ տեղեկատվություն ընթերցողին:
- տեքստի ծավալը չպետք է գերազանցի 2500 բառը՝ ներառյալ գրականության աղբյուրները (մինչև 15 աղբյուր), աղյուսակների և նկարների մեկնաբանությունները:

I. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Ուղեկցող նամակ, որը պարունակում է տեղեկատվություն այն մասին, որ

- աշխատությունը նախկինում չի տպագրվել և ներկա պահին չի գտնվում քննարկման մեջ այլ խմբագրությունում,
- պարունակում է շահերի բախման լիարժեք բացահայտում,
- բոլոր հեղինակները տվել են հավանություն,
- հեղինակները կրում են աշխատության մեջ ներկայացված նյութերի հավաստիության վերաբերյալ պատասխանատվություն:

2. Տեղեկություն հեղինակների մասին

Ներկայացվում են բոլոր հեղինակների.

- ամբողջական անուն, ազգանուն և հայրանունը (3 լեզուներով),
- աշխատանքի վայրերը (3 լեզուներով),
- զբաղեցրած պաշտոնները,
- էլեկտրոնային հասցեները, հեռախոսահամարները, փոստային հասցեները,
- եթե հեղինակների թիվը վեցից ավելի է, անհրաժեշտ է նշել յուրաքանչյուր հեղինակի ներդրումը ներկայացված աշխատանքում (օրինակ՝ գաղափարական և կառուցվածքային մշակում, տվյալների մշակում և վերլուծություն, վերջնական վերախմբագրում և այլն):

3. Տեղեկություն շահերի բախման կամ ֆինանսավորման մասին

- շահերի բախում կարող է ծագել, եթե հեղինակը, գրախոսը կամ խմբագիրն ունեն ֆինանսական կամ անձնական փոխհարաբերություններ, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ գործողությունների և որոշումների կայացման վրա:
- Ուղեկցող նամակում անհրաժեշտ է ներկայացնել շահերի բախման մասին հայտարարություն, եթե այդպիսիք կան, եթե չկան ապա նշել, որ «շահերի բախում չկա»:

4. Տեղեկություն հետազոտության էթիկական նորմերի պահպանման վերաբերյալ

- հետազոտությունը պետք է իրականացված լինի «Պատշաճ կլինիկական գործունեության» կանոններին և «հելսինկյան հայտարարագրին» համապատասխան:
- հետազոտվողները պետք է ծանոթացվեն հետազոտման նպատակներին և հիմնական դրույթներին, որից հետո պետք է տան հետազոտության մասնակցության գրավոր համաձայնություն:
- հետազոտությունները, որոնք ներառում են հետազոտվածների նկարներ, անուններ, անվանատառեր, բժշկական փաստաթղթերի համարներ, խմբագրություն պետք է ներկայացվեն հետազոտվողի գրավոր համաձայնագրի ուղեկցությամբ:

II. ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԶԱՓԵՐԸ

1. Տիտղոսաթերթ

Աշխատության անվանումը պետք է գրվի մեծատառերով, առանց տողադարձի.

- տառատեսակը՝ GHEA Grapalat, BOLD,
- տառաչափը՝ 12 pt.,
- միջտողային միջակայքը՝ 2,
- հեղինակների ազգանունները շեղատառերով (ամբողջությամբ), նշելով անվան և հայրանվան միայն առաջին տառերը, GHEA Grapalat, italic, 12 pt.,
- աշխատությունը ներկայացնող հիմնարկության(ների) ամբողջական անվանումը(ները), քաղաքը, երկիրը,
- ծանոթագրությունները գրվում են արաբական թվերով, հեղինակի(ների) ազգանվան վերջում և հիմնարկության սկզբում,
- վերնագրում հապավումներն անթույլատրելի են:

2. Թեզիսներ

Թեզիսներն անհրաժեշտ է ներկայացնել երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ըստ վերը նշված կարգի: Կանգուցային բառերի թիվը չպետք է գերազանցի վեցը և նույնպես անհրաժեշտ է ներկայացնել 3 լեզուներով:

3. Տեքստ

Տեքստը պետք է տպվի միակողմանի, A4 ֆորմատի, տառաչափը՝ 12 pt., միջտողային 2 միջակայքով, բոլոր կողմերից տեքստի 2 սմ ազատ դաշտերով, հավասարեցված ձախ եզրով: Նյութը պետք է ներկայացվի միավորների SI համակարգում, ոչ ամբողջ թվերը հայերենում և ռուսերենում նշել ստորակետով (օր.՝ $p < 0,05$), անգլերենում՝ կետով (օր.՝ $p < 0.05$): Էջերը պարտադիր պետք է համարակալել՝ սկսած տիտղոսաթերթից:

Օգտագործել գիտական գրականության մեջ համընդհանուր ճանաչում գտած և ընթերցողին հասկանալի հապավումներ, տեքստում յուրաքանչյուր հապավման առաջին անգամ հիշատակումը գրելով ամբողջությամբ և փակագծերում նշելով հապավումը:

Տպագրվելիք բոլոր նյութերը վերանայվում են վիճակագրական փորձագետի կողմից և պետք է համապատասխանեն «կենսաթժշկական ամսագրեր ներկայացվող բնագրերի միասնական պահանջներին» (Uniform Requirements for manuscripts Submitted to Biomedical journals. Ann Intern med 1997;126(1):36-47):

4. Գրաֆիկներ, սխեմաներ, աղյուսակներ և նկարներ

Գրաֆիկները, սխեմաները, աղյուսակները և նկարներն անհրաժեշտ է ներկայացնել առանձին էջերի վրա (ֆայլերով):

Գրաֆիկների, սխեմաների, աղյուսակների և նկարների էլեկտրոնային տարբերակները խմբագրություն ներկայացնել «MS Excel», «Adobe Illustrator», «Corel Draw», «MS PowerPoint» ֆորմատով: Նկարները ներկայացնել ոչ պակաս, քան՝ 300 կետ/դյույմ կարգավորմամբ:

Աղյուսակները պետք է ներկայացվեն սեղմ և պարունակեն միայն կարևոր ցուցանիշներ:

Աղյուսակներում դատարկ վանդակները թույլատրելի չեն (տվյալի բացակայության դեպքում նշել գծիկով):

Աղյուսակների թվերը, տոկոսները և արդյունքներն անհրաժեշտ է մանրամասն վերստուգել, որպեսզի համապատասխանեցվի տեքստի նյութին, սակայն չի թույլատրվում նույնությամբ շարադրել աղյուսակի ողջ բովանդակությունը տեքստում, կրկնություններից խուսափելու նպատակով:

Աղյուսակներում պետք է հստակ ներկայացվեն ցուցանիշների սահմաններն ու տվյալների ձևաչափերը ($M \pm m$, $M \pm SD$, Me, Mo, պերցենտիլներ և այլն):

Անհրաժեշտության դեպքում գրաֆիկների, սխեմաների, աղյուսակների և նկարների հղումները ներկայացնել ներքևում:

5. Գրականության ցանկ (մատենագրություն)

Գրականության ցանկն անհրաժեշտ է ներկայացնել առանձին թերթով, համարակալելով ըստ մեջբերման հաջորդականության: Գրականության ցանկը պետք է համապատասխանի «տեղեկատվական ստանդարտների Ամերիկյան ազգային կազմակերպության» առաջարկած ձևաչափին, որն ընդունված է National Library of Medicine (NLM) կողմից <http://www.nlm.nih.gov/citingmedicine>:

Տեքստում գրականության հղումը պետք է ներկայացվի արաբական թվերով՝ քառակուսի փակագծերում, նախադասության վերջում, վերջակետից առաջ (օր.՝ ... [21]): Չեն խրախուսվում ավելի քան 10 տարվա վաղեմության (բացառությամբ հիմնարար գի տա կան աշխատությունների) գրականության աղբյուրներ:

Մինչև 4 հեղինակով աղբյուրի մեջբերման դեպքում անհրաժեշտ է նշել բոլոր հեղինակներին, ավելի դեպքում՝ երեք հեղինակի, որից հետո՝ «և այլն», «и др.», «et al.» հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով համապատասխանաբար: Աղբյուրների հեղինակների անվան և հայրանվան սկզբնատառերից հետո դրվում է կետ:

Հղումների օրինակներ.

Հոդվածի մեջբերում.

1. Smith A., Jones B., Clements S. Clinical transplantation of tissue-engineered airway. Lancet 2008;372:1201-9.

2. Crossley G., Chen j., Choucair W., et al. Clinical benefits of remote versus transtelephonic monitoring of implanted pacemakers. J Am Coll Cardiol 2009;54:2012-9.

Գրքի մեջբերում.

3. Asmar R. Arterial Stiffness and Pulse Wave Velocity clinical Applications. Paris: Elsevier; 1999.

Գրքի առանձին գլխի մեջբերում.

4. Nichols W., o'Rourke m. Aging, high blood pressure and disease in humans. In: Arnold E., Ed. McDonald's Blood Flow in Arteries: Theoretical, Experimental and Clinical Principles. 3rd ed. london/melbourne/Auckland: lea and febiger; 1990. p.398-420.

Web-հղման մեջբերում.

5. World Health organization. the World Health Report 2002: Reducing Risks, Promoting Healthy life. Geneva, Switzerland: World Health organization; 248. <http://www.who.int/whr/2002/>

III. «ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ» ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՆԱԳՐԵՐԻ ԳՐԱԽՈՍՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Հոդվածն ընդունվում է քննարկման միայն այն դեպքում, եթե համապատասխանում է «Գիտաբժշկական հանդես» ներկայացվող հեղինակային նյութերի պահանջներին:
2. Բնագիրն անհրաժեշտ է ներկայացնել խմբագրություն կամ ուղարկել էլեկտրոնային հասցեով՝ journal@nih.am:
3. Եթե բնագիրը համապատասխանում է «Գիտաբժշկական հանդես» ներկայացվող հեղինակային նյութերի բոլոր պահանջներին, ապա հեղինակին ուղարկվում է ծանուցում բնագրի ստացման վերաբերյալ և բնագրի հաշվառման համարը:
4. Բոլոր բնագրերն ուղարկվում են մասնագիտական գրախոսության, որի ընթացքում պահպանվում է գաղտնիությունն ինչպես հեղինակի, այնպես էլ՝ Գրախոսի համար:
5. Բնագիր հոդվածների գրախոսումն իրականացվում է համապատասխան ստորև թվարկված չափանիշներին, 5 բալանոց սանդղակով, ենթադրելով, որ «0»՝ ընդհանրապես չի համապատասխանում, «5»՝ լիովին համապատասխանում է.
1. աշխատանքը բնագիր է,
2. համապատասխանում է նորույթի պահանջներին,
3. աշխատանքն արդիական է,
4. աշխատանքի նպատակները և խնդիրները շարադրված են հստակ,
5. հետազոտության մեթոդը համապատասխանում է առաջադրված խնդիրներին,
6. նյութերը և մեթոդները նկարագրված են բավարար մանրամասն,
7. կատարված աշխատանքը համապատասխանում է էթիկական նորմերին,
8. վիճակագրական վերլուծությունն արված է համարժեք,
9. ներկայացված արդյունքները համապատասխանում են հետազոտության նպատակներին,
10. ստացված արդյունքները համարժեք են մեթոդներին,
11. արդյունքները ներկայացված են գրաֆիկորեն (աղյուսակներ, նկարներ և այլն),
12. իրականացված են սեփական հետազոտության և գրականության տվյալների համեմատություններ,
13. կան թեմային առնչվող բոլոր նշանակալի հրատարակումներին հղումներ,
14. եզրակացությունները հավաստի են, հիմնված են ստացված տվյալների վրա և ձևակերպված են հստակ,
15. եզրակացությունն արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթները,
16. աշխատանքն ունի նշանակալի գիտական արժեք,
17. աշխատանքն ունի կարևոր գործնական նշանակություն,
18. հոդվածը գրված է գրագետ, մատչելի լեզվով:
6. Գրականության գրախոսումն իրականացվում է համապատասխան ստորև թվարկված չափանիշներին, 5 բալանոց սանդղակով, ենթադրելով, որ «0»՝ ընդհանրապես չի համապատասխանում, «5»՝ լիովին համապատասխանում է.
0. տեսությունը հանդիսանում է օրիգինալ,
1. խնդիրը արդիական է,
2. բացահայտված են լիարժեք,

3. թեմային առնչվող գրականության հղումները արդիական են և արժեքավոր,
4. աշխատանքն ունի նշանակալի գիտական արժեք,
5. աշխատանքն ունի կարևոր գործնական նշանակություն,
6. եզրակացությունն արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթները,
7. հոդվածը գրված է գրագետ, մատչելի լեզվով:
7. Խմբագրությունն էլեկտրոնային տարբերակով հեղինակին ուղարկում է գրախոսության արդյունքները:
8. Եթե Գրախոսը տալիս է դրական եզրակացություն հոդվածի հնարավոր տպագրման վերաբերյալ և չի առաջարկվում կատարել նշանակալի ուղղումներ, ապա հոդվածը տրվում է վիճակագրական փորձագետին և դրական եզրակացության դեպքում ընդունվում է հետագա փուլ:
9. Եթե Գրախոսը տալիս է դրական եզրակացություն հոդվածի հնարավոր տպագրման վերաբերյալ և նշում է համապատասխան փոփոխություններ և ուղղումներ կատարելու անհրաժեշտության մասին, ապա բնագիրը և գրախոսությունը ուղարկվում են հեղինակին առաջարկությամբ՝ հոդվածի նոր տարբերակի պատրաստման ժամանակ հաշվի առնել Գրախոսի նկատառումները կամ ներկայացնել մերժման փաստարկներ: Այդ դեպքում բնագրի ընդունման օրը համարվում է խմբագրված տարբերակի վերադարձման օրը և ուղարկվում է կրկնակի գրախոսության: Գրախոսի դրական պատասխանի դեպքում հոդվածը տրվում է վիճակագրական փորձագետին և վերջինիս դրական եզրակացության դեպքում ընդունվում է հետագա փուլ:
10. Եթե Գրախոսը տալիս է եզրակացություն հոդվածի տպագրության անհնարինության վերաբերյալ, հեղինակին տրվում է հնարավորություն ծանոթանալու գրախոսության տեքստին: Գրախոսի եզրակացության հետ անհամաձայնության պարագայում հեղինակին տրվում է հնարավորություն փաստարկներով դիմել Խմբագրություն: հոդվածը կարող է ուղարկվել Խմբագրական խորհուրդ կրկնակի գրախոսման կամ համաձայնեցման: Խմբագրական խորհուրդը կամ նրա կողմից լիազորված խմբագիրը ուղարկում է իր պատասխանը հեղինակին:
11. Բոլոր գրախոսված և վիճակագրական փորձագետի կողմից գնահատված բնագրերը ներկայացվում են խմբագրական խորհրդի քննարկմանը, հրատարակման որոշման կայացման նպատակով: Հրատարակման թույլատվության դեպքում Խմբագրությունը հեղինակին նամակ է հղում, որում նշվում է հոդվածի հնարավոր տպագրման ժամկետը:
12. Հոդվածները և գրախոսության բնագրերը պահպանվում են խմբագրությունում նվազագույնը մեկ տարի, տպագրման պահից հաշված:
13. Հոդվածը գիտական և գրական խմբագրերի կողմից վերջնական խմբագրումից, սրբագրումից և մակետավորումից հետո ուղարկվում է հեղինակին՝ նախատեսված ժամանակահատվածում վերջնական հաստատման կամ նկատառումների ներկայացման նպատակով:

Խմբագրությունն իրեն իրավունք է վերապահում կրճատել, ուղղել, սրբագրել և խմբագրել հոդվածները, փոփոխել աղյուսակների, նկարների և գրաֆիկական պատկերների ոճը՝ ամսագրի չափանիշներին

համապատասխանեցնելու նպատակով, առանց ներկայացված
տեղեկատվության իմաստը փոփոխելու: Խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում հեղինակների ներկայացրած
տեղեկատվության հավաստիության համար:

Խմբագրության հասցեն՝

ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտ,
0051, ք. Երևան, Կոմիտասի պողոտա 49/4

Հեռ. +374 (10) 23 77 30

Էլ. կայք www.nih.am/arm/smj/

Էլ. հասցե. journal@nih.am